ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանմանը միտված հարցման արդյունքների վերլուծություն

ԳԱՎԱՌ 2024

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2024թ. մարտի 22-ին:

Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝

Հայրապետյան Ք.

Նախրատյան Մ.

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հարցման մեթոդաբանությունը 3
II. Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանում և գնահատում.....4
III. Եզրակացություններ և առաջարկություններ 11

I. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց, կիսաբաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանմանը և բարելավմանը:

II. Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանում և գնահատում

Գավառի պետական համալսարանում առկա և հեռակա բաժիններում Արցախից բռնի տեղահանված 29 ուսանող է դիմել կրթությունը շարունակելու նպատակով, որոնցից հարցմանը մասնակցել են 26-ը, 3-ը հարցմանը չեն մասնակցել քանի որ իրենց դիմումների համաձայն հեռացվել են համալսարանից՝ չմասնակցելով առարկայական տարբերությունների հանձմանը և դասընթացներին:

1. Ընդհանուր տեղեկություններ

Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ ֆակուլտետների, բաժինների և մասնագիտությունների

Ֆակուլտետը, բաժինը	Ուսանողների ընդհանուր թիվը	
	Առկա	Հեռակա
	Բակալավր/մագիստրոս	Բակալավր
Բնագիտատնտեսագիտական	**6**	
Ֆինանսներ /ըստ ոլոտի/	1/-	
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/		5
Հումանիտար մասնագիտությունների	**20**	
Իրավագիտություն	4/-	4
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	3/-	7
Հայոց լեզու և գրականություն	2/-	
Ընդամենը հեռակա բաժնում	**10**	**16**
Ընդամենը	**26**	

Հաջորդիվ ընդհանուր մասնակիցների թիվը՝ 26-ը, կընդունենք որպես 100%, և մասնակցությունն ըստ ֆակուլտետների և ուսուցման համակարգերի արդեն կունենա հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 1, 2):

Գծապատկեր 1

Ուսանողների համալրումը՝ ըստ ֆակուլտետների



Գծապատկեր 2.

Ուսանողների համալրումը՝ ըստ ուսուցման համակարգերի



1.1 Ընտանիքի կազմը, նրանց զբաղվածությունը, առողջական վիճակը (կա՞ն հաշմանդամներ, թե ոչ, խնդրում ենք նշել այլ տվյալներ).

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Արցախից բռնի տեղահանված և ԳՊՀ-ում կրթություն շարունակող ուսանողների ընտանիքների մեծ մասը բազմանդամ են, ընտանիքի անդամների թվաքանակը տատանվում է 5-ից 11-ի միջև, որոնց շարքում մեծ թիվ են կազմում անչափահասները, հիմնականում ծնողները գործազուրկ են և եղել են նախկին պայմանագրային զինծառայողներ:

Ընտանիքների կազմը, զբաղվածությունը, հաշմանդամների առկայությունը.

1. 1 ուսանող -2 ընտանիքի անդամ,
2. 1 ուսանող- 3 ընտանիքի անդամ,
3. 5 ուսանող -4 ընտանիքի անդամ
4. 2 ուսանող-5 ընտանիքի անդամ,
5. 5 ուսանող-6 ընտանիքի անդամ,
6. 7 ուսանող- 7 ընտանիքի անդամ,
7. 1 ուսանող - 8 ընտանիքի անդամ
8. 4 ուսանող 11 ընտանիքի անդամ:

Հարցվող ուսանողների 26-ից 6-ի ընտանիքում կան 2-րդ և 3-րդ կարգի հաշմանդամներ, 2 ուսանող նշել է նաև, որ միակողմանի ծնողազուրկ են:

3. **Ունեցե՞լ եք արդյոք դժվարություններ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու նպատակով դիմում և համապատասխան փաստաթղթեր ներկայացնելիս:**

Գծապատկեր 3.



Հարցվողները հարցին ի պատասխան նշել են, որ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու նպատակով դիմելիս և փաստաթղթեր ներկայացնելիս որևէ դժվարություններ չեն ունեցել:

4. **Տրամադրվե՞լ է Ձեզ խորհրդատվություն ԳՊՀ-ում ուսումնական գործընթացի, առարկայական տարբերությունների հանձնման վերաբերյալ:**

Գծապատկեր 4.



Հարցվողների 80%-ը հարցին դրական է պատասխանել, 20%-ը՝ ոչ: «Ոչ» պատասխանը հիմնականում նշվել է հեռակա ուսուցման բաժնի «Իրավագիտություն» և «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտությունների 1-ին և 4-րդ կուրսի ուսանողների կողմից:

Հարցվողները հստակեցրել են նաև, թե որ ստորաբաժանման կողմից է տրվել խորհրդատվությունը:

Հարցվողները նշել են հետևյալ ստորաբաժանումները.

1. Ռեկտորատ
2. Ակադեմիական քաղաքականության բաժին
3. Որակի ապահովման բաժին
4. Դեկանատ

5. Հանդիպե՞լ եք դժվարությունների Ձեր կուրսի ուսումնական գործընթացին միանալիս:

Գծապատկեր 5.



Հարցվողների 92%-ը հարցին բացասական է պատասխանել՝ նշելով, որ դժվարություններ չեն ունեցել ուսումնական գործընթացին ինտեգրվելիս: 8%-ը հարցին դրական է պատասխանել՝ նշելով, որ ունեցել են դժվարություններ ուսումնական գործընթացին միանալիս:

Ուսումնական գործընթացին ինտեգրվելիս դժվարություններ են ունեցել

առկա ուսուցման բաժնի «Իրավագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները, ովքեր սակայն չեն հստակեցրել, թե ինչպիսի դժվարություններ են ունեցել:

6. Ունե՞ք համացանցին միացված համակարգիչ.

Գծապատկեր 6.



Հարցվողների 72%-ը հարցին դրական է պատասխանել, 28%-ը՝ ոչ: «Ոչ» պատասխան հիմնականում նշվել է հեռակա ուսուցման բաժնի «Իրավագիտություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտությունների ուսանողների կողմից:

7. «Ինչպիսի՞ ուսումնական նյութերի, գրենական պիտույքների և այլ ռեսուրսների կարիք ունեք» հարցին ի պատասխան հարցվողների մեծ մասը նշել է, որ ուսումնական նյութերի, գրենական պիտույքների կարիք չունեն, սակայն կրկին հեռակա ուսուցման բաժնի «Իրավագիտություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտությունների ուսանողները նշել են, որ կարիք ունեն համակարգիչների և մասնագիտական գրականության:

8. Ի՞նչ առաջարկություններ ունեք, որոնք կնպաստեն Ձեր կրթական կարիքների բավարարմանը և ԳՊՀ ուսումնական միջավայրի բարելավմանը:

Հարցին ի պատասխան 26 ուսանողներն էլ միայն շնորհակալության խոսքեր են գրել:

9. «Ինչպե՞ս կարող ենք Ձեզ օգտակար լինել» հարցին ի պատասխան ուսանողները նշել են.

1. Օգնել վարձի մուծման համար:
2. Շնորհակալություն ձեր հոգատարության համար:
3. Շնորհակալություն այս տարի անվճար ուսուցում ապահովելու համար:
4. Շնորհակալ եմ անվճար սովորելու համար:
5. Շնորհակալություն այս տարվա անվճար սովորելու համար:
6. Շնորհակալ եմ Ձեզ ինձ այստեղ գրկաբաց ընդունելու և աջակցելու համար:
7. Շնորհակալություն բարեհամբույր վերաբերմունքի համար:
   Շնորհակալություն ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին, ԳՊՀ ստորաբաժանումներին նման ընդունելության և ջերմ վերաբերմունքի համար:
8. Ունեմ համակարգչի կարիք և դիմում են Ձեր օգնությանը: **/Մարինե Մնացականյան/**

IV. Եզրակացություններ և առաջարկություններ.

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ Արցախից բռնի տեղահանված և ԳՊՀ-ում կրթություն շարունակող բոլոր ուսանողներն էլ հարցմանը մասնակցել են: Ուսանողների միջին տարիքը տատանվում է 19-20 տարեկանի միջև:

Ուսանողների գրեթե մեծամասնությունն ապրում է բազմանդամ ընտանիքներում, որոնց միջին թիվը տատանվում է 5-ից 11-ի միջև, ընտանիքներում մեծահասակները հիմնականում գործազուրկ են, 6 ուսանողի ընտանիքում կան 2-րդ և 3-րդ կարգի հաշմանդամներ, իսկ 2-ը՝ միակողմանի ծնողազուրկ են: Առավել ծանր վիճակում գտնվում է հեռակա բաժնի «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Արեգա Ավանեսյանի ընտանիքը: Ուսանողուհին ապրում է հայրիկի հետ, մայրը և եղբայրը մահացել են:

Հարցվողների մեծ մասը նշել է, որ դժվարություններ չեն ունեցել ԳՊՀ դիմելիս, ժամանակին ստացել են համապատասխան խորհրդատվություն:

Հարցվողները կրթական կարիքների շարքում կարևորել են համակարգիչների և մասնագիտական գրականության ապահովվածության խնդիրը:

Հարցվողների մեծամասնությունը գոհունակություն է հայտնել բուհի խորհրդատվական ծառայություններից՝ նշելով, որ Գավառի պետական համալսարանն աշխատում է ակադեմիական ազնվության սկզբունքով և բոլոր առումներով օրինակելի բուհ է, ռեկտորատը, դեկանատը և ամբիոնը տրամադրում են ցանկացած խորհրդատվություն և տեղեկատվություն:

Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանմանը միտված հարցման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են համապատասխան ստորաբաժանումներ (ֆակուլտետներ, ամբիոններ), որպեսզի ուսումնասիրվեն, ԳՊՀ ռեկտորատի կամ գիտական խորհրդի նիստերում ներկայացվեն համապատասխան լուծումներ և առաջարկություններ, ձեռնարկվեն միջոցներ՝ ԳՊՀ-ում նրանց կրթությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար: